ՇՈՒՇԱՆԻԿ ՄԿՐՏՉԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆՑ

1889, Սպավրոպոլ – 1969, Մոսկվա

Մշակույթի և գաղափարի պահապանը

ՀՏԴ 929:947.925 Մանուչարյանց+02

1970 թ. մարտի 12-ին, Թալինի շրջանային խորհրդի պաշտոնաթերթում՝ «Կոմունիզմի դրոշով», հրապարակվեց Շուշանիկ Մանուչարյանցի հոդվածը՝ «Վլադիմիր Իլյիչի գրադարանում» վերնագրով, ուր հակիրճ ներկայացրեց իր կյանքի այն բացառիկ դրվագները, երբ որպես Վլադիմիր Լենինի գրադարանավարուհի՝ աշխատել էր նրա գրադարանում: Այս պաշտոնը, սակայն, Շուշանիկ Մանուչարյանցի հագեցած ու բովանդակալից կենսագրության մի մասն է միայն: Նրա կյանքի ուղին ավելի մեծ է ու հետաքրքրական:

Շուշանիկ Մկրտչի Մանուչարյանցը ծնվել է 1889 թ. սեպտեմբերի 15-ին Ստավրոպոլի երկրամասի Բուդյոնովսկ քաղաքում: Ավարտելով տեղի գիմնազիան՝ 1907 թ., դեռևս 18 տարեկան հասակում, նա մեկնել է Պետերբուրգ և ընդունվել ժամանակի հայտնի իգական (Բեստուժևյան) հաստատությունը: Սա այն կրթական հաստատությունն էր, որտեղ ուսանել են Ռուսաստանի ամենախելացի և առաջադեմ կանայք: 1912-1914 թթ. Շուշանիկն ապրել է Իտալիայի Կապրի կղզում՝ հնարավորություն ունենալով խորությամբ ուսումնասիրել իտալերենը, արվեստն ու գրականությունը: Հենց Կապրիում էլ նա ծանոթացել և մտերմացել է ռուսական մշակույթի երեք հսկաների՝ Ալեքսեյ Գորկու, Ֆյոդոր Շալյապինի և Իվան Բունինի հետ: Այս կապերը հետագայում խորը ազդեցություն են թողել նրա գաղափարական և մշակութային կողմնորոշման վրա:

1917 թ.՝ հեղափոխական Պետրոգրադում, Մանուչարյանցն աշխատել է հեռագրական գործակալության գրական բյուրոյում: 1918 թ. գարնանը նա տեղափոխվել է Մոսկվա և աշխատել Համառուսաստանյան Կենտգործկոմի հրատարակչությունում: Նույն տարվա հունիսին ընդունվել է Ռուսաստանի կոմունիստական կուսակցության շարքերը: 1919 թ. ընդունվել է նոր ստեղծված Պետհրատ (Պետական հրատարակչություն), զբաղվել գրադարանային աշխատանքով, այնուհետև դարձել հրատարակչության խմբագրական կոլեգիայի քարտուղարը: Այդ ժամանակներից նա ներգրավվել է պետական և կուսակցական հրատարակչական գործունեության մեջ:

1920 թ. մարտի 14-ից Շուշանիկ Մանուչարյանցը դարձել է Վլադիմիր Իլյիչ Լենինի գրադարանի գրադարանավարուհին: Սա բացառիկ պաշտոն էր, որը ենթադրում էր ոչ միայն գրքերի պահպանում ու դասակարգում, այլև երկրի ղեկավարին տեղեկատվության սպասարկում: 1924-1930 թթ. նա շարունակել է իր աշխատանքը՝ այս անգամ Նադեժդա Կրուպսկայայի՝ Լենինի այրու անձնական գրադարանում, որը տեղակայված էր հենց Կրեմլում:

Մանուչարյանցն ավելի քան 25 տարի աշխատել է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում՝ որպես գիտաշխատող: Այդ տարիներին նա կազմել է, խմբագրել ու հրատարակել մի շարք արժեքավոր գրքեր՝ նվիրված Լենինի կենսագրությանը, հեղափոխական մամուլին և խորհրդային գրահրատարակչության պատմությանը:

Մահացել է 1969 թ. հունվարի 24-ին և թաղվել Մոսկվայի Նովոդևիչյան գերեզմանատանը:

Խորհրդային շրջանում թողարկվել է փոստային ծրար Շուշանիկ Մանուչարյանցի պատկերով:

Հեղինակ է մի շարք գրքերի:

✓ Даты жизни и деятельности Ленина. 1870-1924: 2-е изд., испр. и доп. /Ппод ред. Г. А. Тихомирнова.- Москва: Парт. изд-во, 1933.- 307, [4] с.

✓ Большевистская "Правда": [Сборник]: К 25-летию основания "Правды".- [Москва]: Партиздат, 1937.- 255 с.

✓ Աշխատանքը Վլադիմիր Իլյիչի գրադարանում /Թարգմ.՝ Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Հարությունյան.- Երևան: Հայպետհրատ, 1960.- 13 էջ:

✓ В библиотеке Владимира Ильича.- Москва: Политиздат, 1965.- 111 с.

✓ Վլադիմիր Իլյիչի գրադարանում /Թարգմ.՝ Ս. Կ. Խաչատրյան; Խմբ.՝ Ա. Ա. Լյուլիկյան.- Երևան: Հայաստան, 1966.- 133 էջ:

✓ В библиотеке Владимира Ильича. 2-е изд, доп. /Ред. В. Н. Светцов.- Москва: Политиздат, 1970.- 115 с.

✓ Знакомство с Горьким //В книге М. Горький в воспоминаниях современников.- 1981.- с. 276-280.

Ռուսաստանի Դաշնության ժողովրդական արտիստ Վյաչեսլավ Մանուչարովը Շուշանիկ Մանուչարյանցի եղբոր՝ ՌՍԽՍՀ վաստակավոր գյուղատնտես Գեորգի Նիկիտայի Մանուչարովի թոռն է:

___ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ ___

Վյաչեսլավ Մանուչարովի հարցազրույցը «Sputnik Արմենիա»-ին «Լենինն ու Շուշանիկ փապը. դերասան Մանուչարովը բացահայտել է ընտանեկան գաղտնիքները» վերնագրով հասանելի է հետևյալ հղումից՝
https://arm.sputniknews.ru/20180621/armenia-vyacheslav-manucharov-lenin-shushanik-12790520.html?fbclid=IwY2xjawJsL_JleHRuA2FlbQIxMAABHizOwNipRrfUQCfnjyBq9LQFTBCDHIFmvyXpR3M-u5Tlsc9qyiLqpDQymseL_aem_dGCAa5mxQAkgZZO9kLMaog

Պատրաստեց՝ Տիգրան Զարգարյան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան